


ՅՆՈՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԱՐ

Նամակ կամ ուր ե գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳԻՐ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՔ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 380
» » վեցամսեայ » 50
Օգտու երկիրներ տարեկան ծրագր 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նամակ կամ այլ գրութիւն եւ չի օրուր :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

ՈՒ . . . ԳԵՐԵՋՄԱՆԱԳԻՆ

Եզրագրութեան մէջ, ուր ամենէն հրատապ խնդիրներն ու տաք վիճարանութիւնները գերեզմաններու շուրջը կը դառնան դժբաղդաբար, զարմանք չի պիտի պատճառէ բնաւ այս երկու հակընդդէմ բացատրութիւններուն զուգորդութիւնը, մէկը կենդանութեան նշանն ու միւսը՝ մեռելութեան : Արդէն, մեր նպատակն ալ, ո՛չ թէ ընթերցողներն հետաքրքրել է, այլ անոնց դատաստանին ենթարկել հարց մը որ շատ պզտիկ ըլլալուն համար կարեւոր ըլլալէ չի դադարէ : Ընդհակառակն, հանրային կեանքի և ազգային գործերու հետ անմիջական կապ ունի և տեսակ մը իրաւաբանական կնիք կը ստեղծէ որ ուշ կամ կանուխ պէտք էր հրապարակ հանուէր :

Ժողովի մը, խնամակալութեան մը, հագաբարձութեան մը մէկ անդամը կամ ատենապետը իրաւունք ունի՞ անհատի մը իր պարտական եղած գումարը վճարել այն վարչութեան անուակին զոր կը վարէ ազգասիրաբար, — թէեւ անուակը պահանջ մը ունեցած ըլլայ այդ անհատէն, — ու այս կերպով հետը հաշուակցել անոր կամքին հակառակ : Օրինակ մը աւելի բացայայտ կերպով պիտի պարզէ միտքերնիս : Ըսենք թէ թաղական մը ձեռք մը հազուաւ շինել տայ գերեզմանի մը որ իւղաղինի պարտք ունի եկեղեցիին : Հագուստները առնէ, գործածէ, առանց կանխաւ կասկած տալու իր վճարման նպագիւտ եղանակին վրայ, և գերեզմանի հաշիւը ստացած պահուն, պատասխանէ անոր : « Ես քեզի տալիք 100 ֆրանքս եկեղեցիի անուակին վճարեցի, գնա՛ր բանդ » : Կամ թէ հոգաբարձու մը, իր անձնական պէտքին համար, դընտններ ընէ խանութէ մը և երբ դրամը պահանջուի՝ պօռայ խանութպանին երեսին « Դո՛ւն քու տղուդ դպրոցի ամսաթուղակները չես վճարած, ես հոն պիտի տամ այս ստակը » :

Չի կարծէք սակայն թէ այս օրինակներով ակնարկել կուզենք այն տեսակ տիպարներու որոնք այս հաշուակցութիւնը թուղթի վրայ միայն կատարեն, առանց քրական ձեռք դպցուներու այդ պարագային մէջ՝ դրամական զեղծումներու վրայ պիտի ըլլար խնդիրը, հինցած նիւթ մը զոր չարժեք և անօգուտ է վերար-

ծարծել : Ընդհակառակն, այդ թաղականը, այդ հոգաբարձուն կենթադրենք հարուստ և պատուաւոր անձեր, խղճամիտ հակող հանրային դրամին, իրենց անձնականէն ալ տալով ատեն ատեն, ու շատ աշխատութիւն նուիրելով : Բայց միթէ իրենց այս խղճահարութիւնը, ամեն կասկածանքէ վեր եղող իրենց դրամական պարկեշտութիւնը իրաւունք կուտայ՝ այդ « մենք աղանջներուն » ժողովուրդի զակի մը, արուեստաւորի մը, խանութպանի մը — անոնք ալ իրենց չափ պարկեշտ ու ազգասէր — զրկանք ընել, այս բռնապետութեան կամ այս բարոյական զեղծումին վրայ է որ կը ծանրանանք ահա :

Մենք՝ խոշոր բառերու և ծայրայեղ բացատրութիւններու սիրահարներէն չենք, որոնք շատ անգամ հանրային միամտութիւնը շահագործելու կը ծառայեն : Բայց « բռնապետութիւն » և « բարոյական զեղծում » բառերուն վրայ կը պնդենք այս պարագային մէջ : Հարուստ ըլլալը բաւական չէ ազգային կամ եկեղեցական հաստատութիւն մը լաւ վարելու համար, պէտք է նաեւ բարեկիրթ, ժողովրդասէր ու վեհանք ըլլալ : Տարին գրպանէն 10—20 ոսկի ժամուն կամ աղքատներուն նուիրելը իրաւունք չի տար բարեբար կոչուելու, պէտք է իրապէս բարեգործ ու արդարասէր ըլլալ : Այս երկրին հայ փաշաները աւասիկ կենդանի օրինակ են մեր ըսածին : Բայց ժողովրդական խաւերուն հետ ուղղակի չլիման մէջ գտնուելու, դիտակից են անոնց ցաւերուն և ամեն ատեն նպաստած են ու կը նպաստեն՝ ո՛չ միայն դրամով, այլ և իրենց պաշտպանութեամբ, իրենց ընկերային յարաբերութեանց ընծայած առաւելութիւններով : Վերջին մէկ տարուան մէջ միայն, հարկերներով կը հաշուին գաղթականներ որոնք իրենց յարմար մէկմէկ գործի տեղաւորուեցան անոնց ձեռքով կամ յանձնարարութեամբ, թողունք այն լիաւատ օգնութիւնները որոնք եղան կարօտեալներուն, նոյն իսկ օտարներուն դիմուելով, միշտ անոնց նախաձեռնութեամբ :

Բայց անդին պարոն մը կամ էֆէնտի մը որ քիչ շատ հարստութիւն դիզած է և եկեղեցականին ու աշխարհականին վրայ տիրապետելու մարմաններ կ'զգայ, իրաւունք ունի՞ նիւթական շատ համեստ կացութեան տէր քաղաքացիի մը, ազգակցի մը արդար պահանջը հանրային այսինչ անտուկին տալ, քմա-

հաճ կերպով, որովհետեւ ինք այդ հանրային գործին զըւելը կը գտնուի, և դուռը գոցել անոր երեսին : Հոս է խնդիրը :

Ո՛ւր մնացին սակայն, պիտի հարցունէք, « բաժանորդագին ու . . . գերեզմանագին » : Վերնագիրնիս արդարացունելու և քիչ մը աւելի մօտենալու համար իրականութեան, վերջին օրինակ մըն ալ տանք :

Ենթադրեցէք թէ հրապարակագիր մը, որուն հայրը մեռած ըլլայ մէկ-երկու տարի առաջ, թերթ մը հիմնէ շատ համեստ միջոցներով, և իր բաժանորդներու ցանկին մէջ ունենայ նաեւ անունը հարուստ անձի մը որ ինքնաբերաբար նամակ ուղղելով թերթին՝ փափագ յայտնած ըլլայ երկու օրինակ ստանալու : ամիս մը, երկու ամիս, չորս ամիս անցնին : մեզի պէս պարզ մահկանացուներ, օրը օրին շահող ու ապրողներ, կը վճարեն իրենց պարտքը : Բայց հարուստը կը մոռնայ, չա՛տ գործառնութիւններ ունի, յետոյ դիւրամատու չելի չէ : վեցերորդին, ամենայն քաղաքավարութեամբ, ընկալագիրը իրկուի Ազնուաշուքին որուն սեղանին վրայ կը մոռցուի գոնէ քանի մը շաբաթ : փոյթ չէ, « անանկ մարդէն առնելիքնիս » ըլլայ կրտսէն ընդհանրապէս : Օր մըն ալ, նեղութեան վայրկեանի մէջ, խրմբագիրը ելլայ երթայ այդ « ապահով » դրամը գանձելու : Ու սա տեսակ պատասխան մը ստանայ « Պարո՛ն, ես հին տոււարներուն մէջէն փնտռեցի գտայ որ հօրդ գերեզմանագինը վճարուած չէ եղեր » : քեզի պարտական եղած երկու ոսկի բաժանորդագինս . . . գերեզմանատան պիտի վճարեմ որուն վերին հսկողութիւնն ունիմ և հասցիներն աւելցունել կուզեմ » : Եթէ ասանկ բան մը ձեզի պատահէր, դուք ի՞նչ պիտի մտածէիք : մենք, ակամայ ու ցաւելով, պիտի յիշէինք Քամառ Քաթիպայի համբաւաւոր յանկերգը . . . :

ՄՕՆՍԵՐԱԴԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Ա. . .
Ի յիշատակ մեր կրկին այցելուն

Ա.
ՃԻՆԱԻՈՐԸ

Պարսընի գաւառին մէջ, հեռուն՝ լեռն ու աւայի զանգուած մը ժայռեզէն, խորիւտ իր լիրտ ու ահարկու տեսքով, կը կանգնի հարթ դաշտին մէջ, նման անձոտի հրէշի մը : Այդ է Մոնսէրադը : Հոն ժամանակին կապրէր այրի մը խոռոչը, սընանելով վայրի տունկերով, սրբակրօն, մենակեաց

երիտասարդ մը վաղէնիայէն, խառն կարին առնուով:

Այս արդար ու ազնիւ մարդը, ահա եօթը տարիներէ ի վեր կը ճգնէր հոն ազգայնական օրն ի բուն, հայցելով բարձրեւոր զօրք մարդկային թշուառութեանց վրայ, խնայելով իր շնորհքը տառապելոց համար ու ազգերեւելի որ տայ այժ ու զօրավիգ տկարներուն որպէսզի կարենան դիմադրել ու յաղթել չարին:

Բ.

ՍՍՏԱՆԱՆ

—Կը յուսամ որ անմիջապէս խախտել տարաբնէ իր հաւատքը: Բայց խորհում, կը մտնում ինչ իր գլխաւոր գէշը խաչն է որուն ապաւինած կրնայ անվրա կռուիլ քեզի դէմ:

—Այո կը յուսամ միշտ, կը պատասխանէր սառնասէն: Կարին երիտասարդ է սրտով, մտքով, մարմնով, անգիտակ աշխարհային հոգեքնքերուն: Գիտեմ իր ոյժը, բայց իմ յոյսս այսօր այնքան մեծ է որ քան կրնայ վերջապէս չափել իր տկարութիւնները ու դատել իմ կարողութիւնս: Այս առաւօտ իսկ առաջնորդեցի զինքը լեռան գագաթը, ցայց տուի այդ բարձրեւոր իր հայրենիքը, հոն, հորիզոնին ծայրը, երեւակայեւ տուի մարդկային երջանկութիւնը և այն հեշտայի երանութիւնը զոր կարող է մարդ գտնել սիրուհւոյ մը գրկերուն մէջ: Խայթեց անոր սիրտը սիրոյ տենջը ու արցունքներ տեսայ աչքերուն մէջ:

Այո, կը յուսամ միշտ: Օգնէ ինձի հաւատարմարար ու յաղթանակը մերը պիտի ըլլայ: Պիտի երթամ ուրեմն Պարսկոյն, Վայոտաբայի պալատը ուր պիտի դռնես կոմսին աղջիկը, Ռիքիտտ, գողտր, հրաշալի, փափուկ, անոր մարմինը բոլորովն պիտի ըլլայ ինչ որ մինչեւ այն վայրկեանը յորում Կարին վանէ քեզ խապուս:

Գ.

ՍՏԻԱՄՊԵՐ

Ամբողջ Մօնակապը պատած էր աչքը երեկոյ խոր տխրութիւն մը: Մութ ամպեր պաշարած էին լեռան հեռաւոր գագաթները: Այդ ահաւոր անկերպ ժայռը իր ամէն կողերէն սուգ կը շնչէր: Կարին չէր կարող փարատել անբացատրելի թախիծը որով լեցուն էր իր սիրտը:

Ալեւոր անցորդ մը կանգ առաւ իր դրան առջև:

—Երեսուն տարի է որ կը ճգնեմ հոս, ըստէ, իմ տարիքս կը ներէ անշուշտ հրաժարիլ աշխարհէն ուր հազուադէպ բերկրանքներու հետ խառնուած գոյաց անվերջ կակիծ, ցառ ու տառապանք: Բայց դու անմիտ երիտասարդ, ո՞ր, ի՞նչպէս գտար այդքան վատահոգութիւն քու վրայ, այդքան յանգեցնութիւն մերժելու համար կեանքի հրապարակները զոր սակայն բնութիւնը ստեղծած է յստակ իբր մենաշնորհ քու երիտասարդ հասակիդ: Գիտե՞ս թէ ինչ է գոտապաշտելը կեանքով, աւելնով լի մարմին մը դիակի կացութեան, երբ բնութիւնը ամբողջ կը խոյտայ չորս կողմը, մարդիկ, անասունք, իրերը: Իսկ դու... .

Ու Կարին կը տարակուսէր ու կը վհատէր...

Դ.

ՌԻՔԻԼՏԱ

Քանի որ երբէ ի վեր կը թառամէր Ռիքիտտ փափուկ ծաղիկ մը պէս որուն կը պակսին օդն ու տրեւը: Իր գեղեցիկ կուսական մարմինը, նիհարցած, տկարացած ու հիւանդ, կորուսած էր իր կայտառութիւնը ու ամբողջ կորովը:

Աչքերը նուաղիտ, ինքն անկար, ցառադար, դարման կաղրատէր անանուն տառապանքներուն ու բռնցմով կը մաշուէր:

Հայրը՝ Վիթթիտ Բիլլոս, կոմս Պարսկոյնայի եւ իշխող Գաղափօնեայի, իր ամբողջ հարստութիւնը կը խոտաւորէր անոր որ պիտի ապաստէր իր սիրելի աղջիկը վերահաս մահուան ճանկերէն:

Հրեայ մը, անհուն գիտութեան տէր մարդ, յաղեւտական վարձատրութեան խոտաւորներէն, բնեւէր Ռիքիտտի հիւանդութիւնը — Տէր իշխան, ըստ կոմսին, գիտութիւնը ոչինչ կարող է ձեր աղջկանը վիճակին: Գիտեցէք առ Աստուած և իր սուրբ միջոցներուն, Ռիքիտտ այս ահաբեալ է:

Այս սոսկալի ըրրը անմիջապէս տարածուեցաւ ամբողջ քաղաքին մէջ: Եկեղեցիներուն զանգակները կը հնչէին տխուր ու ճգնալի:

Ներք կը հնչէին տխուր ու ճգնալի գիշեր ու ցերեկ, աղօթքներ ու մալթանքներ կը թռչէին ամէն շրջութեան, ամէն սրտերէ Ռիքիտտի ապարկումները համար:

Բարձրագոյն կրէր յայտարարեց թէ գաւառին պրազային ու ամենաարդարը, ինքն իբր թարգման եղբարցը ազգայնեան, պէտք է որ ազօթէ հիւանդին մօտ անձնապէս 9 օր 9 գիշեր անոր աղատմանը համար: Այդ արդարն էր Կարին:

Ե.

ՄԵՂԲՆ ՈՒ ՄԱՀԸ

Կարին կզգար իր կուրծքին տակ շարժումն անհուն ալիքի մը որ կուգէր սրտիկէն ու գանկին մէջ ահագին փոթորիկ մը զոր կը յարուցանէր Ռիքիտայի ներկայութիւնը իր մենաուսման մէջ:

Անանուն տենջանքներ, անձնագի կիրքեր կեռային իր սրտին, իր երակներուն մէջ, թռնաւորելով հոգին ու արմուն: Կը տառապէր ողորմելին, ծնրադրած բնքու աղջկանը առջին, ու իր աղօթքները կը բարձրանային զէպի երկինք շփոթելով իր ցառերը ու հիւանդինը միտքին:

Դուրս, քամին, անձարձակ կը սուրար, կը գոտար ժառերուն մէջէն, ու Կարին չուսա ու խելազար, գրկերուն մէջ, սրտին դէմ սեղմած կը պաշտպանէր իրեն յանձնուած գանձը կատարի բնութեան դէմ:

Վայրկեան մը իրենց շրթներէն իրարու հայցուն... .

Կարին դուրս ցատկեց յանկարծ իր ուրջէն ու տեսնելով այնքան ճշնաւոր որուն հետ օրեր առաջ տեսակցած էր, խոտափանեցաւ անոր իր մեղքը, խրատ հայցելով իրմէ:

—Ձեզ, անհետացար ոճրիդ հետքը, շուտ, շուտ, կը սնդէր սողայելը, քու և Ռիքիտային փրկութեանը համար:

Կարին երբ խելայնոր դուրս բերելով Ռիքիտային դիակը բոտակով շարժուած փոսին մէջ գործեց խեղճ մարմինը, նշմարեց տառաւորան նուաղ նորոճին լոյսերուն մէջէն ճգնաւորը որ կը կերպարաւ նափոխուէր ձգելով իր խաւովի գէպը: ու կը կը հեռանար ծախսաւորելով խնդրութեան իր տարած վատ յաղթանակին:

Պարսկոյն 25 դեկտեմ.

ՄԵՆԻԿ

ԱՅԺՄԷՈՒԹԻԻՆ

ԴԻԻԻՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ

Նիսրական հաւնեւս պայմաններու մեջ բարեգործութիւնը ընկելու կամ գրականութիւնը փաշարելու ազնիւ փառաքան կրնաքոնենք. բայց երբ անոր կը տրուի այնպիսի ձեւ մը որ ուշքամեռ ուրիշ քանի չի ծառայէր, առանց գոնէ նիսրական գոհողութիւն մը յանձն առնելու եւ երբեմն միւնչելու իսկ անողորմակի շահ մըն ալ ակնկալելով, այն ասեւ ծիծաղելի չենք կրնար զրուպել: Անցեալները Պոլսոյ գրականաւ մը, իր խառնութիւն փոշիներուն տակ մզոյսած գիրքերէն փակի մը ծրար սկսաւ նուիրել շաւաղոյն յողաւոր գրողներուն. քննադատելի քան մը չի պիտի գտնուէր իր այս արարին մէջ, եթէ առանց աղմուկի կատարէր զայն. բայց Մեհմեթ-Չարքի այդ Հաշէքը մեկեւնասի հովեր առնելով՝ իր անուամբ, որ գրասանն ալ անունն է, մրցանակ մը հաստատելն հոյակեց յազիրներուն մէջ որոնք սկսան ներքոյն հիստել անոր:

Այս օրերս ալ, նոր աշխարհի մէջ նոր հրասարակող քերթ մը քանաստեղծութեան մրցում մը կը հաստատէ. գաղափարը շաւ է մանաւանդ անոր հաւաք որ ոտանաւորը անհետանալով վրայ է մեր ազգային գրականութեան մէջէն. քոյդ քերթները փա-

շարեւորին: Լաւագոյն քանաստեղծութեանց հեղինակներէն առաջին երեքին մասնաւոր նուիրել պիտի տրուի յազիրին վարչութեան կողմէ. առաջ ալ յստի չի կայ:

Առանց քանաստեղծ ըլլալու, հետաքրքրուեցանք սակայն մրցման պայմաններն այժն անցունել:

Քերտականական կամ լեզուի մտաւորներն երկրորդական կարեւորութիւն պիտի տրուին:

Ուրեմն անկիւնի նպատակաւոր կամ շրջուն տէսթանի մը պիտի կրնաւ ամերիկեան քրքրասարին յանձնել իրենց ներքին յունները, մրցանակի ակնկալութեամբ: Հապա՛. միայն թէ... .

Լաւագոյն կրնէք կարդալ յաջորդ պայմանը:

Այս մրցման մասնակցելու համար մրցակիցը պարտին բաժանորդագրուիլ լրագրոյս, եթէ արդէն բաժանորդ չեն եղած. և այս առթիւ եղած ծախքերը (°) հոգալու համար պիտի եւն մեզ մէն մի բոնաստեղծութեան հետ 10 մէթի նախադրում:

Այս դրամական պահանջումին առջեւ, Պոլսեցի գրականաւ ըրածը կը նսեմանայ: Ա՛ն գոնէ վրայ փարայ չէր ուզած: Արեւելցիի ու եւսկիի հնարամտութիւնը՝ միացած՝ առելի ճարտար միջոց մը չէին կրնար գտնել... . քաժանորդ ճարտար հաւաք: Պակա՛ս ըլլան ասանկ մրցանակները որոնք քանաստեղծութեան ու գրական մրցումի իստալը կաղտոնեն:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Փառ Տ՝Այեֆաւանքի Կ. Պոլսոյ թղթակիցը իր վերջին նամակին մէջ (29 դեկ.) կը գրէ.

«Հանրային ապահովութիւնը շատ գէշ վիճակի մէջ է ի Կ. Պոլիս: Բաղմաթիւ գողութիւններ, սրոյ մէկ քանին անլուր յանդուգնութեամբ, տեղի ունեցան շարժուած մէջ և ոստիկանութիւնը ուշադրութիւն չի դարձուներ: Իր բոլոր զբաղումն է հնթադրական դաւադիրներ փնտռել ու հանդիպածը կը ձերբակալէ: Բանտերը լեւ լեցուն ըլլալուն, նոր բռնուածներուն տեղ կը բանան՝ հինները անհետացնելով: Հայերը կը գանդաւին թէ իրենց ազգակիցներէն շատեր աներեւոյթ եղած են ժամանակէ մը ի վեր: Կենթադրենք թէ թուրք ոստիկանութիւնը ընդհանուր կուտորածներուն տեղ հաստատուած է անհատական ոչնչացման դրութիւն մը իր նպատակին համեմու համար, այն է հայ ազգին կատարեալ փճացումը»:

Փառ Տ՝Այեֆաւանքի չափաւոր և միշտ մէկ աստիճան ապահովանալիս թերթ մը ըլլալուն, իր թղթակցին այս տխուր տեղեկութիւնները չենք կրնար բոլորովն երեւակայական նկատել դժբաղդարար:

Բռնութեւ ալ իր երէկի քաղաքական տեսութեան մէջ կը գրէ.

«Արեւելքի կացութիւնը շատ կոհուտ է տակաւին: Կ. Պոլսոյ հասարակութիւնը տարտաւ երկիւղներու մէջ կը գտնուի: Աղետալի զրոյցներ կը շրջին հայերու կամ փշտօնիւրքերու ենթադրական դաւադրութիւններու վրայ և ոստիկանութիւնը առիթէն օգուտ կը քաղէ՝ հանդարտիկ քաղաքացիներ ձերբակալել, դրամ շրթեւել համար: Դուռը շփոթած է երկարատեւ անտուգութենէն: Համեմա-

տարար բազմաթիւ զօրքեր կը պահէ զէնքի տակ, առանց զանոնք կերակրելու և վայելուչ կերպով հագուեցունելու նիւթական միջոցներն ունենալու: Իր եկամուտի աղբիւրները կը սպառին, և սակայն կը յետաձգէ պահեստի զօրքերուն հեռացումը, որպէսզի յանկարծակիի չի գայ եթէ յառաջիկայ դարձան, ինչպէս շատ հաւանական է, նոր դժուարութիւններ ծագին: Մէկ խօսքով, պատերազմը անել ճամբու մը մէջ ձգեց Թուրքիան:

—Կրէտէ գտնուող ծովակալները տեղեկանալով որ Դուռը մտադիր է 5000 նոր զօրք խրկել կղզին՝ արդէն գտնուածներէն նոյնքան թուով ետ կանչելու համար, ծանուցեր են կառավարչին թէ ի մօտոյ պիտի զբաղին այս խնդրով:

—Կ. Պոլսէն կը հաղորդեն թէ, կրսէ Բոսկոյի, պալատը որոշեր է օտմ. ընդհ. հիւպատոսութիւն մը հաստատել ժընէվի մէջ՝ այդ քաղաքն ապաստած ժէօն-Թիւրքի կուսակցութեան անդամներուն վրայ հսկողութիւն կատարել տալու համար: Աւելի դործնական չէ՞ր ըլլար այդ հիւպատոսութիւնը յանձնել հոն գտնուող ժէօն-Թիւրքներուն իսկ, որոնք առիթ կը փնտռեն իրենց հաւատարմութեան ապացոյցները տալու:

—Էթնիքի էթէրիան, յունաց յեղափոխական ընկերութիւնը, հրատարակեց իր պաշտպանողական տետրակը որուն մէջ կը յայտարարէ թէ իր հիմնադիրները սպաներ եղած են: Իր ուժը կը կայանայ բանակին մէջ և նպատակն է բոլոր հեղինակներուն միութիւնը ազգային նոյն իշխանութեան ներքեւ: Ուստի հեղինական բոլոր կեդրոններէն ու ամեն դասակարգէ անդամներ առաւ: Վաստի գնդապետին Կրէտէ խրկուելէն քանի մը շաբաթ առաջ դադարն յիշատակագիր մը մատուցած էր Եօրկիոս թագաւորին՝ բանակին անկերպարան վիճակին վրայ և յայտարարած թէ կառավարութեան որոշումներուն պիտի համակերպի: Այդ վայրկեանէն կսկըին էթէրիային յարաբերութիւնները Պ. Տէլիեանիսի հետ, որ նախարարապետ էր այդ թուականին: Տետրակը կը պարունակէ պաշտօնագրի մը օրինակը ուսկից կերեւի թէ նախարարաց խորհուրդը, 1897 մարտ 12ի նոտին մէջ, որոշեր է էթէրիային զինուորական միութեանոյն համար 500,000 փամփուշտ հայթայթել, որ արդարեւ յանձնուեր է ընկերութեան ներկայացուցչին ի թեսալիս: Պատերազմական նախարարին քանի մը հրամանագրերն ալ կը յիշուին, զինուորական իշխանութեանց ուղղեալ, որպէսզի էթնիքիին պէտքերն հոգան: Պ. Տէլեանիսի անձնական արտօնութեամբ, երկու սպաներ նշանակուեր են էթէրիային անկանոն խումբերուն առաջնորդելու համար: Պատերազմին մէջ մեռած երեսունի չափ սպաներու անուններ կը յիշուին ամենքն ալ անգամ էթէրիային: Ընկերութիւնը ի վերջոյ իր դրամական գործառնութեանց հաշիւը կը ներկայացունէ ուսկից կերեւի որ 1,200,000 տրախմիի գումար մը ունեցած է իր տրամադրութեան ներքեւ:

Կըսուի թէ Պ. Տէլեանիս ալ իր կողմէ տետրակ մը պիտի հրատարակէ, ի պատասխանի էթէրիային յայտարարութիւններուն:

—Միտիօնները լաւ պատրուակ մըն են

Գերմանիոյ ձեռքը, իր ազդեցութիւնն հետզհետէ զօրացնելու համար Չինաստանի մէջ: Երկուշաբթի օրը Բէրլինէն հեռագիր մը հաղորդեց թէ Թոմաս-Շաուի (Շանկ-Չունկ թերակղզի) միտիօնները գանգատած ըլլալով Բէրլինի գերմանական դեսպան Պ. Հոյքիսկի թէ տեղւոյն հրամանատարն սպառնալիք ըրած է իրենց, դեսպանն այդ պաշտօնատարին հրաժարեցումը պահանջեր է, սպառնալով աւելի քալել: Չինական կառավարութիւնն իսկոյն համակերպեր է:

ՓՈՔՐԻԿ ԳԱԼՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԾՆՈՒՆԴԸ

Գ. Յուլիակ Նուիրատուաց

Գումար Բ. ցուցակի զր. ուղ 1109	
Տիար Հ. Աղատեան	10
Տիկին Նուրիյայ Բ. Արթինեան	20
» Հայկանոյ Բ. Իսթիարեան	20
Տիար Միհրան Արթին	100
Օ. Գ.	20
Հոյկանոյ Հ. Աղաթում, Մարտիրոս և Կալապետ (Թարաքճեան օրդի, Իսթիարեան) 77	50
Միհրի մե բարեկամներ Տիար Սարգիս Յովհաննէսեանի ձեռամբ մեզ զրկած են.	
Տիար Կարապետ Գրիգորեան	100
» Ստեփան Յովհաննէսեան	100
» Սարգիս »	50
» Սարգիս խոնճեան	20
» Պօլոս Բ. Պաղարեան	10
» Սէփոսեան Կարապետեան	10
» Գրիգոր Չարակիւլէեան	10

Գումար զր. ուղ 1656 50

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Բնիկ Կեսարայի ազգային մը, Տիար Կարապետ Խուպէսերեան, որ երկար տարիներ վաճառականութեամբ զբաղած է ի Թիֆլիզ, կտակ մը ըրեր է որով 3000 ոսկի կը թողու ազգ. բարեգործական նպատակներու: Կտակատարը, վաթսուամեայ ծերունի մը, այժմ՝ դործէ քաշուած, իր կեանքին մնացեալ օրերը հանգիստ կանցունէ ծննդավայրին մէջ, Թալաս գիւղը: Գնահատելի հեռատեսութեամբ մը, ուղած է իր կենդանութեան և իր ձեռքով կարգադրել կտակին ամեն մանրամասնութիւնները, ու գործադրութիւնն ապահովել: 3000 ոսկին ուսուական 4 0/0 արժէթով թէ որ տարին 120 ոսկի տուիս կը բերէ: Թալասի դպրոցը, Պոլսոյ հիւանդանոցը, Երուսաղեմի վանքը, ամենքն ալ իրենց բաժինն ունին այս կտակին մէջ: Տիար Խուպէսերեան տարեկան 15 ոսկի գումար մը յատկացուցած է՝ մանկավարժական լաւագոյն դասագիւրք հեղինակողին: Մրցանակաբաշխութիւնը պիտի կատարուի Պատրիարքարանի կողմէ:

Երկուշաբթի օրը տեղի ունեցաւ Աղբըսանդիոյ մէջ Տիար Մ. Անանեանցի ամուսնութիւնը Օրիորդ Մառի Արթինօֆի հետ:

Առաւօտեան ժամը 11 1/2ին մանկամարդ հարսը իր ձեռմակ հարսանեկան արդուդարդին մէջ անգամ մը եւս շնորհագեղ, իր ծնողքէն և ընտանիքի անդամներէն չըրջապատուած հասաւ Ս. Պօլոս-Պետրոս եկեղեցին, ուր հրաւիրեալներու խումբն բազմութիւն մը արդէն լեցուած էր: Պատիկ արարողութիւնը կատարեց տեղւոյն քարոզիչ Տ. Վահրամ վարդապետ:

Աղբըսանդիոյ հայ և Կուրդացի բարձր դասուն պատկանող անձնաւորութիւններ ներ-

կայ էին այդ հանգէսին. անոնց մէջ նշմարեցինք Աղբըսանդիոյ պարսկական հիւպատոսը որ կը ներկայացնէր միւլեոյն ատեն Դահիրէի դիւանագիտական գործակատարը, Ռուսական հիւպատոսը, Խամայիլ փաշա Սապրի՝ քաղաքին կառավարիչը, Սատալա փաշա Հալաօ, Պ. Պէնէտուչի, Տիկին և Օրիորդ Մօրիօնտ, Արթին պէյ, և Տիկին Ռէիզեան, Տիկին և Օր. Մէրսիէ, Տիար Ա. Կամարական, Բինի պէյ, և Տիկին Բինի, Շաքուր պէյ, և Տիկին Շաքուր, Օրիորդ Վէյոն, Պ. Խուսար Ամիր, Տիար և Տիկին Ա. Մաղիկեան, Տիար և Տիկին Հ. Էրիզէր, Տիկին Սալինեօն և Օրիորդ Կրէկ Պօռ, Տիկին Չարեան պէյ, Տիար և Տիկին Մալթաֆօֆ և ուրիշ շատեր զորս յիշելու համար այս սիւնակը նեղ պիտի գար:

Պատիկ արարողութենէն ետք՝ հրաւիրեալները մեկնելէ առաջ, իրենց խնդակցութիւնները յայտնեցին նորապսակ ամուսին և ծնողաց:

Կէս օրի մօտ էր երբ Տիար և Տիկին Անանեանց առաջնորդուեցան Անտօն Էֆ. Արթինօֆի տունը ուր շքեղ ծաղկեփունջեր եւ բազմաթիւ բարեկամներու կողմէ զրկուած հեռագիրներ կսպասէին համակերպի հարսին:

Ընտանեկան ճաշէ մը ետքը, հարսն ու փեսան ժամը 4 1/2ի Էֆսթրէսով մեկնեցան դէպի Գահիրէ ուր համաներուն՝ կայարանին մէջ դիմաւորուեցան շատ մը բարեկամներէ որոնք իրենց խնդակցութիւնները և շնորհաւորութիւնները յայտնեցին:

Պարսից ընդհ. հիւպատոսարանի կառքը առաջնորդեց ամուսին թիւֆլիզիցի ընակարանը ուր պիտի անցընեն իրենց մեղրալուսինը: Այդ երջանիկ պահունքը բարեկամ Տիար Անանեանցին ինչպէս նաեւ իր շնորհագեղ Տիկնոյ կը ներկայացնէր մեր սրտագին և անկեղծ բարեմաղթութիւնները և խնդակցութիւնները:

Մեզ զրկուած հեռուեալ նամակը նոյնութեամբ կը հրատարակենք:

Պարոն տնօրէն Փարոսի
Վեց ամիս է ստքի տամ չունի որ դպրոց երթամ, հայրիկս ըստ քի մեզի համար բարս կը ծօղվի: Կօր եղեր ծնունդին կօշիկ, չորսոյ առնելու համար յախճապան չօծուիներուն: Իմին հայրիկս ամեն կարանթի հէժ լաթ կտանէր հէժ խոնտուրա. ամա ինչ քններ սա տարի հօս եկանք սրան մը չուներ, խեղճ եղանք, լոյց գուք մեր հօգը կը տանիք կօր:

Անոր համար ես աղօթք կընեմ քի մեզի պէս աղքատ և պարիկ ուրոյ բարեկամը քրիստոս ձեր գործին յաջողութիւն տայ:

ՍԵՓՈՆ

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Ֆիկաւոսի բարեգեան մանր լուրերու բաժնին մէջ հետեւեալը կը կարդանք «Տարօրինակ այցելու մը» խորագրին տակ:

«Վայելուչ երեւոյթում և ըստ բաւականին լաւ հագուած երիտասարդ մը երէկ առաւօտ ժամ 9ին միջոցները արտաքին գործոց պաշտօնատան վանդակորմէն ներս մտնելով կը պատրաստուէր նախարարին խուցին նախասենեակը տանող սանդուխներէն վեր ելլել, երբ գնապանք՝ որ անոր ետեւէն վազած էր՝ թեւէն բռնելով կեցուց:

«Ո՛ւր կերթաք, պարոն, հարցուց դու նապանը այցելուին:

«—Կուզեմ նախարարը տեսնել որուն նամակ մը ունիմ յանձնելիք ինչպէս նաեւ կարեւոր խնդիրք մը մատուցանելիք:

«—Բայց, պարոն, այսպէս կարելի չէ երթալ նախարարին քով, առանց կանխաւ ունկնդրութիւն մը խնդրելու և արտօնութիւն ստանալու, և մանաւանդ այսպէս զինուած, առարկեց դռնապանը՝ մատովը յոյց տալով լայնափող բէլովէրը զոր մէջքը դրած էր տարօրինակ այցելուն, սեւ կաշիէ պատեանի մը մէջ:

«Եւ նշան ընելով պաշտօնատան շուրջը հսկող ոստիկաններուն, անոնց յանձնեց երկու տասարդը որ առաջնորդուեցաւ ոստիկանութեան գումիսէր Պ. Պրօնեարի մօտ:

«Այնտեղ, այցելուն յայտարարեց թէ Պողոս Ֆրանսիսեան կը կոչուի, թէ բնիկ Կ. Պոլսեցի է, իրաւաբանութեան ուսանող և թէ վեց օրէ ի վեր Բարիզ կը գտնուէր: Ժընէվէն կուգար: Յարեց թէ իր եղբայրներուն հետ դատ մը ունենալով՝ արտաքին գործոց պաշտօնատունը կերթար Պ. Հանօթոյին խորհուրդը հարցունելու:

«Այս խեղճ տղան որ, իր իշխանած սենեակին վարձքը չի կարենալ վճարելուն պատճառաւ, ամբողջ գիշերը թափառած էր Բարիզի փողոցներուն մէջ, ոստիկանութեան դարմանատունը խրկուեցաւ: Իր ընկերները լեցուն էր հինգ գնդակով»:

Նիւ Եօրքէն կը հեռագրեն թէ Բրօնտայքի (Բանատա) ոսկեհանքերէն դարձող ամերիկացի մը, Պ. Ճէյմս Բլէմէնթս, որ արագ կերպով հարստութիւն գիզած էր հին, իւր ման իրիկունը իր բնակարանին մէջ Ծնունդի ծառ մը պատրաստել է որ տեսակին մէջ առաջինն ըլլալ կը կարծուի: Ծառին կոճղը հաստատուած էր 20 տօլարնոց արծաթ դրամներու դէպի մը մէջ և ճիւղերը ծածկուած էին ոսկիի հատիկներով, ընդ ամենը 350,000 ֆրանք արծաթով ծածկուած: Հետաքրքրականն հոն է որ գեռ տարի մը առաջ Պ. Բլէմէնթս երկաթուղիի խեղճ գործաւոր մըն էր:

Հռչակաւոր բեւեռախոյզ Նանդէնի համար ըսուեցաւ թէ ընկերութիւն մը կազմելու վրայ է բեւեռային երկիրներու մէջ հանքեր շահագործելու համար: Զի կարծուի սակայն որ փնտռուածը հանք մըն է մագնիսի որ հիւսիսային բեւեռին մէջ գտնուելուն համար դէպի իրեն կը քաշէ աշխարհիս բոլոր կողմնացոյցներուն ասեղները:

Փնտռուածը ոչ ոսկի է, ոչ արծաթ և ոչ ալ հանքածուխ, այլ տարօրինակ բան մը, մաքէ չանցնելիք: Մի՛ յոգնիք, չէք գտնել, Նանդէն՝ ցուրտին հանքն է որ գտնել կուզէ:

Բացատրենք. չէ՞ մի որ պաղին կեդրոնը հիւսիսային բեւեռն է. արդ Պ. Նանդէն կուզէ այդ պաղը խողովակներու միջոցաւ տեղափոխել մինչեւ Ափրիկէ ուր տարը անտանելի է: Խողովակներուն անցած տեղերն ալ որոնք Եւրոպայի բարեխառն երկիրները պիտի ըլլան, պիտի կրնան օգտուիլ պաղութեան այդ ճամբայէն՝ սառեցնելու համար իրենց... լիմոնաաները: Որքան որ Փանթֆօլի մը երեւոյթ ունի այս ձեռնարկութիւն, սակայն ընկերութեան մէջ անանկ լուրջ մարդիկ կան որ կը ստիպեն զմեզ այս ձեռնարկին յաջողութեան հաւատարմութիւն:

ՕՐԱՑՈՅՑ

1898 թՈՒԱԿԱՆԻՆ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը ծախուի Փարոսի տպարանը ի դին 60 փաւրողով:

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

PASCHAL & C^{IE}

G. G. MEIMARACHIS & C^{IE}
SUCCESEURS

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵՆԻԹԵԱՆՑ
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԵՆԷՆ ԸՆԴԱՐՁԱԿԸ

ԲԱՍՓԱԼ ԵՒ ԸՆԿ.

Գ. Ճ. ՄԷՅՄԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ., ՅԱԶՈՐԴԲ
ԳԱՀԻՐԷ ԷՕԶՊԷՔԻԷ ԳԱՀԻՐԷ

Զմեռնային նորաձեւութեան մետաքսեղէններու, բրդեղէններու և այլ այս կարգի ապրանք մեծ և բազմատեսակ վաճառում: Բարիզեան վերջին ճաշակով պատրաստուած գլխարկներու յատուկ վաճառարան և մօտիւղներու վերաբերեալ նիւթեր:

ՆՈՐ ԶԻԻՂ

Անգլիական և ֆրանսական ասուեղէններու ինչպէս գերձակներու վերաբերող ապրանքներ:

ԲՐԻՍԹՕՅԼԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՔ

Մեծ մթերանոց սեղանի սպասներու և խոհանոցի առարկաներու:

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՅԱՆՁՆՈՒՆ

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ
6—10

ԳԱՐԹԱԼԻ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

Պոլսէն յաւկապէս բերել սրուած այս սեղանի համար անաւաս գինին կը ծախուի Եւրոպայի Պողոսեանի խանութը ի Պազար Մուրուր քիւ 42. Գահիրէ ուր կը գտնուի նաեւ զուտ եւ պատուական օղի:

15—16

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններու և հագուստներու. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց չապիկներ, չըղաղեւտներ, ևն. մաքրութիւն, ճշգրտագործութիւն, և խիստ չափաւոր գին:

10—24

ՏՊԱՐԱՆ

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒՄ

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԷ ՇՐԱԲԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽ

ՏՈՄՍԵՐ

Եղիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեքարտերու և տետրերու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱԳՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սրբախալիքներ: Թարմ հանգալից ջուրեր, անուշահոտութիւնք եւն. Բնաղածական և մանրադետական քննութիւնք: Դեղարանը կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողները:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար: 16—50

Ս. ԹԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ, Յ ԹԵՎԻԿ փաշա փողոց

ՇԱԼՈՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԴԵՄ

Կերպաներու զանազանութեամբ ու ընտրութեամբ և ձեւի ու ճաշակի կատարելութեամբ այս տան գլխիմ յաճախողները գոհ պիտի մնան թէ պատրաստուած հագուստներէն և թէ գիններու չափաւորութենէն:

Դիւրամատչելի պայմաններ 2—4

Ա. ԼԷԹՈՒԱԼ


Կ. Պողոս մէջ հանրածոտնոթ ՊՈՍՖՈՐ վաճառատունէն Տեաքը Յովակիմեան Եղորտը այս անգամ հաստատուած են ի Գահիրէ և Մուսթի փողոցը: Լաթէսի գոհարավաճառատան գիւտայ բայցած են վաճառատուն մը ուր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն Ֆանէլա, զուլպայ և զանազան տեսակ ընտիր ծալիկներ, օձիքներ, քեւոցներ:

Ճոխ զանազանութիւն մարօքներով, հոսեղէններու և արդուզարդի վերաբերեալ ամեն տեսակ տպրանաց: Շեֆիլթի հոգաւորութիւնը պողոտայի գործիներ, ամեյի, մկրաս, զմեյի ևն:

ԱՊՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐԻ

Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշգրիտ և փութով կը կատարուին: 13—24

Միւսկայն 120 դրուս վաճառելով գինէ, ոսկի, կոթիք, արծաթ, խիստ փութով և ընտիր ծախայով մը թէ կընդ և թէ արանց համար, թող դիմէ:



Խառն խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւակերպէ բեռնակ մէջ, ուր կը գտնուին նաեւ ամեն տեսակ ոսկի, արծաթ, ոսկեպատ և նիւթէ ծախայովներ: Այստեղ և փոստով բազմազան խանութներ, ինչպէս նաեւ գոհարեղէնք: 8—12



ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ԵՒ ԱՅԼՆ ԼՈՒԱՆՈՒ ՀԱՄԱՐ
ԴՈՐ ԾԱՆՅՈՒՆ

ԼԷՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ

Ծախի եւ ծամանակի խնայողութիւն. Մաքրութեան կատարելագործութիւն. Արագութիւն եւ դիւրութիւն. ձեռնակէ դեղներու եւ այլոց հալանքիւն:

ԿԱՐԵԻՐ. ԼԵՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՆՆԵՐ

Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիլօ տարեկան սպառում. Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի: Միակ ներկայացուցիչ յեգիպոս

Կ. Վ. ԵԿԱԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գահիրէ. ՊԱԶԱՐ ՄՈՒՐՈՒՐ 23—24